

Վ. Հարությունյան

ԹՈՐՈՍ ԹՈՐԱՄԱՆՅԱՆԸ ԵՎ ՀԱՅ ՃԱՐՏԱՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԳԻՏԱԿԱՆ ՈՒՍՈՒՄՆԱՍԻՐՈՒԹՅՈՒՆԸ

(Մենդյան 90 և մահվան 20-ամյակի առթիվ)

Մեր գիտական և ճարտարապետական հասարակայնությունը վերջերս նշեց մի կարևոր տարելից՝ հայ կուլտուրայի աչքի ընկնող գործիչներից մեկի, հայկական ճարտարապետության բազմավաստակ հետազոտող՝ ճարտարապետ Թորոս Թորամանյանի ծննդյան 90 և մահվան 20-ամյակը: Թորամանյանն իր կյանքի 30 տարին նվիրաբերել է հայրենի երկրի ճարտարապետական հուշարձանների ուսումնասիրությանը և մի շարք աչքի ընկնող հետազոտություններով հիմք դրել հայ ճարտարապետության պատմության գիտական մշակմանը:

«Ըթե ճարտարապետությունը քարացած երաժշտություն է,— ասում է իր հուշերի մեջ մեր մեծանուն բանաստեղծ Ավետիք Բասակյանը,— ապա Թորոս ճարտարապետը այդ քարացածը վերածել էր կենդանի երգի: Նա մեր հոյակապ ավերակների և հուշարձանների նույնքան հոյակապ երգիչն է»¹:

Թորոս Հարությունի Թորամանյանը ծնվել է 1864 թ. Շապին-Փարահիսարում (Թյուրքիա), հողագործի ընտանիքում: Մանկությունից զրկվելով ծնողներից, իր բարեկամների օժանդակությամբ նա կրթություն ստանալու նպատակով 1884 թ. մեկնում է Կոստանդնուպոլիս: Միայն 4 տարի հետո նրան հաջողվում է ընդունվել Գեղարվեստների ճեմարանի ճարտարապետական բաժանմունքը, որն ավարտում է 1893 թվականին: Կարճ ժամանակ որպես ճարտարապետ նա աշխատում է Պոլսում, իսկ այնուհետև 1894—1900 թթ. Բուդղարիայի տարբեր քաղաքներում, որտեղ կառուցում է մենատներ տարբեր մարդկանց համար: Ցավոք սրտի նրա կյանքի այս շրջանի ստեղծագործական աշխատանքի վերաբերյալ լրիվ տվյալ չունենք:

Սակայն Թորամանյանը, որ հակված էր դեպի գիտական-հետազոտական աշխատանքները և հետաքրքրվում էր արվեստի ու ճարտարապետության պատմության հարցերով, չէր կարող բավարարվել պրակտիկ գործունեությամբ: Նպատակ ունենալով է՛լ ավելի հմտանալ ճարտարապետական արվեստի մեջ, նա ձեռնարկում է մի շարք ճանապարհորդություններ, լինում է Եգիպտոսում, իսկ այնուհետև մեկնում է Փարիզ՝ արվեստի ու ճարտարապետության պատմության վերաբերյալ դասախոսություններ լսելու համար:

Թորոս Թորամանյանի գիտական գործունեությունն սկսվում է 1903 թվականից, երբ բանասեր Կարապետ Բասմաճյանի հետ նա Փարիզից Հայաստան է գալիս՝ նպատակ ունենալով զբաղվել հայրենի երկրի ճարտարապետության ուսումնասիրությամբ: Հայրենի երկիրը նրա առջև բացվում է որպես մի հետաքրքիր հեքիաթային աշխարհ: Հույ ժողովրդի տաղանդավոր նախնիների անուղղակի ստեղծագործությունները դյուրեմ էն նրան իրենց բարձր արվեստ-

¹ Այլ. Իսահակյան, Երկերի ժողովածու, հատ. 4-րդ, Երևան, 1951, էջ 39:

տով, գեղարվեստական արտահայտչականության մեծ վարպետությամբ: «Ուխտեցի մնալ այնտեղ, — գրում է Թորամանյանը, — աշխատել, տքնել... մեր ժողովրդի հանճարի շնաշխարհիկ բեկորները՝ փլատակներու և գերեզմանական տխուր հողակույտերուն տակեն ազատել և ցույց տալ ամբողջ գիտական աշխարհին»¹:

Սակայն որքան ազնիվ էին նրա նպատակները, այնքան դժվար էր դրանք իրականացնել նախասովետական Հայաստանի պայմաններում: Զուրկ լինելով որևէ նյութական օժանդակությունից և հիմնականում ապավինելով այս կամ այն բարերարի քմահաճույքին, Թորամանյանը հարազատ հողի վրա սկսած իր բեղմնավոր աշխատանքի հենց սկզբից դեմ առ դեմ կանգնում է համարյա անհաղթահարելի խոչընդոտների առաջ: Առանձնապես ծանր էր նրա համար Անիում անցկացրած ձմեռը, ուր թողնված բախտի քմահաճույքին, ստիպված էր մեծ զրկանքների պայմաններում կատարել իր առաջին հետազոտական աշխատանքները:

«Ապրելով ցուրտ, շտաքացվող և մինչև ծնկները անձրևաջրով լցված սենյակում, — պատմում է մի առիթով Նիկողայոս Մառը, — Թորոս Թորամանյանը հասավ ծայր աղքատության, նա օրերով սովի էր մատնված, ծածկված էր ցրնցոտիներով»:

Բայց Թորամանյանն այն գիտնականներից չէր, որ վախենար նման դժվարություններից: Բացառիկ նվիրվածությունը, աննկուն կամքը և Հայրենի երկրի կուլտուրական ժառանգությունն ուսումնասիրելու անսահման ձգտումը, մղում էին նրան հաղթահարելու բոլոր դժվարությունները, առանձին պարագաներում առաջացած վհատության տրամադրությունները:

Անիում ձմռան ծանր պայմաններում անցկացրած ամիսներից հետո, նա 1904 թ. գարնանը գալիս է էջմիածին, հույս ունենալով օգնություն ստանալ իր կարևոր գործը հաջողությամբ առաջ տանելու համար: Էջմիածնի «հոգևոր հայրերը», հատկապես նրանցից առավել «ուսյալ» մասը, շտեմնված անտարբերությամբ են ընդունում Թորամանյանին: Այդ վերաբերմունքը այն աստիճան է վիրավորում խրախուսանք սպասող հայ գիտնականին, որ նա խորին դառնությամբ է խոսում հայ եկեղեցու պաշտոնյաների մասին: Իր «Տեկորի տաճարը» նշանավոր աշխատության առաջաբանում, խոսելով հայ հոգևորականների անտարբերության և տգիտության մասին, Թորամանյանը գրում է. «Տասնյակ տարիներ ժողովրդին կաշին քերթեր են այդ վանքերու ու եկեղեցիներու անունով, զոնե հետաքրքիր այցելուին քանի մը հատ ու կտոր տեղեկություններ տալու շափ ալ բան սովորելու փուլթ շեն արեր...: Մոտավորապես մի դար է, որ էջմիածինը պարսկական բռնակալ լուծեն ալատված մեծ Ռուսաստանի հովանավորության տակ ամեն ազատություն և խաղաղություն կր վայելե, սակայն այդ խաղաղության մեջ ո՞ր եպիսկոպոսը կամ վարդապետը մտածեր է թողուլ ճարպով փրվելու և նորահարսի պես պճնազարդվելու ձրգտումները ու նվիրվեր է անմիջապես զինքը շրջապատող անթիվ հիշատակարաններու հետազոտության»²:

¹ Թ. Թորամանյան, Զվարթնոց եկեղեցին, «Մուրճ», 1903 թ., № 3, էջ 188 (Այս և մյուս դեպքերում, երբ մեր օգտագործված մեջբերումները չեն մտել «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» աշխատության մեջ, ցույց ենք տալիս նրանց սկրորնադրյունները):

² Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911:

Թորամանյանի կարծիքով, հայ հոգևորականների մեջ որոշ բացառություն էր կազմում հաշիկ վարդապետ Դադյանը, որն անձնական նախաձեռնությամբ սկսել էր պեղել մի քանի նշանավոր հուշարձաններ, սակայն իր սահմանափակ գիտելիքների ու անփորձության հետևանքով պեղումների ընթացքում լուրջ վնասներ էր հասցրել նրանց: Դրանում Թորամանյանը լիովին համոզվեց, երբ Դադյանի առաջարկով 1904 թ. հանձն առավ կազմել նոր պեղված Ջվարթնոց տաճարի հատակագծի և բեկորների չափագրությունը և այնուհետև ձեռնարկեց նրա վերակազմության աշխատանքին: «...եթե պատահաբար ես վրա չհասնեի, և ըստ կանոնի շհետևեի յուրաքանչյուր բեկորի ընկած տեղին, դիրքին և չափերին,— դրում է Թորամանյանը,— և մնար հաշիկ վարդապետի հասկացողության և ամեն ինչ ոչնչացնելու ուղղությամբ առաջ տարվեին մնացած պեղումները, պարզապես պետք է միանգամայն կորած լինեի Ջվարթնոցի ընդհանուր կառուցվածքն ու ներքին և արտաքին ձևերը»:

«Միայն Ջվարթնոցը չէ,— շարունակում է նա,— որ հաշիկ վարդապետի բրշի տակ կորցրել է իր բոլոր ցանկալի առանձնահատկություններն ի վնաս գեղարվեստի պատմության. կան նաև ուրիշ տեղեր, որոնք ավերված են ու ոչնչացված են անկարգ և անգիտակից փորումների պատճառով: Միևնույն ձևով պեղվել է Գառնին, Դվինը, Եղվարդը և ուրիշ կարևոր վայրեր»¹:

Իր Թորամանյանն սկսեց աշխատել Ջվարթնոցում, պեղումները չէին ամբողջացած, տաճարի միայն մեջն էր մաքրված, իսկ դուրսը դեռևս մնում էր չպեղված: Թորամանյանը, մասնակցելով Ջվարթնոցի պեղման աշխատանքներին, անդնահատելի ծառայություն մատուցեց գիտությանը, կորստից փրկելով մի նշանավոր հուշարձանի մնացորդները:

Ջվարթնոցի վսեմ և հույակապ ձևերը ավերակների ժխորի միջից վերակենդանացան ու վեր խոյացան, նրանք մատչելի դարձան մեր սերնդի համար միմիայն շնորհիվ Թորամանյանի հմուտ և խորաթափանց հետազոտության: Հազիվ թե սխալված լինենք, եթե Թորամանյանի անունը համարձակորեն դնենք տաղանդավոր ճարտարապետների ու վարպետների մեզ համար անհայտ այն պայծառ անունների շարքը, որոնք VII դարում կերտեցին հայ ճարտարապետության այդ բարձրարվեստ հուշարձանը:

Ջվարթնոցի կոմպոզիցիոն ձևերի վերակազմությանը նախորդեց նրա հատակագծի և առանձին բեկորների ուշադիր չափագրությունը, որի ընթացքում Թորամանյանը մեծագույն ուշադրությամբ էր զննում և ուսումնասիրում յուրաքանչյուրի աեղը և կատարած դերը տաճարի ճարտարապետական օրգանիզմում: Ապա, սկսելով նրա առանձին մասերի վերակազմությունը, Թորամանյանը կարողացավ հանգել Ջվարթնոցի ամբողջական ճարտարապետական կերպարի վերականգնմանը:

Իթե տաճարի հատակագծի ձևերը համեմատաբար հեշտությամբ հաջողվեց վերարտադրել, ապա նրա տարածական ձևերի վերարտադրությունը պահանջեց Թորամանյանից ստեղծագործական մեծ աշխատանք, խոր գիտելիքներ և ճարտարապետական բեկորների ուշադիր հետազոտության վրա հիմնված համարձակ և խիզախ կոահումներ:

Ջվարթնոցի ճարտարապետական-տարածական ամբողջական կերպարը, որին հանգեց Թորամանյանը վերակազմության իր նախագծով, հիմնվում է

¹ Թ. Թորամանյանի, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հատ. II, Փրկան, 1948, էջ 289:

հուշարձանի պահպանված մասերի վրա կատարած ուշադիր գննումների, հատակագծից բխող կոնստրուկտիվ սխեմանի պարզ պատկերացման և ճարտարապետական բազմաթիվ բեկորների լեզվի խորաթափանց բմբռնման վրանրա վերակազմությամբ Զվարթնոցը պատկերանում է մեր առջև իր եռաստիճան, ուղղաձիգ առանցքի նկատմամբ կոնցենտրիկ միասնական ծավալով: Զվարթնոցի վերակազմության իր հիմնական գաղափարները Թորամանյանը շարադրել է այն փոքր հոդվածում, որ լույս է տեսել 1905 թ. «Մուրճ» ամսագրում, և որն իրականում հանդիսանում է նրա կազմած նախագծի բացատրագիրը:

Թորամանյանի դիտական մկրտությունը նշանավորող այս անդրանիկ աշխատանքը ոմանց կողմից ընդունվեց տարակուսանքով ու թերահավատությամբ: Էջմիածնի որոշ հոգևոր գիտնականներ և հատկապես Մեսրոբ Մազիստրոսը, նույնիսկ անընդունելի համարեցին այն: Նրանք ստեղծեցին նվաստացուցիչ մթնոլորտ Թորամանյանի անվան և կատարած աշխատանքի շուրջը: Այդ ժամանակի սուր վիճարանությունների իբրև վկա պահպանվել է մի խոշտանգված գծադիր. դա Զվարթնոց եկեղեցու կտրվածքն է, գծված Թորամանյանի կողմից, որի վրայից խաչիկ Դադյանն իր տգիտության և միամտության պատճառով ու Զվարթնոցի եռահարկության հարցի շուրջը եղած վիճարանություններին «վերջ տալու» նպատակով, մկրատով կտրել էր երրորդ գմբեթային հարկը:

Մեսրոբ Մազիստրոս Տեր-Մովսեսյանն աշխատում էր «հեղինակավոր» մասնագետների միջոցով ստուգել Թորամանյանին, նպատակ ունենալով նրանց օգնությամբ վարկաբեկել մեծ գիտնականի խիզախ մտահղացումը: Հետաքրքիր է այդ տեսակետից Թորամանյանի բանավեճը ճարտարապետ Քրիստափոր Տեր-Սարգսյանի հետ, որը Մեսրոբ վարդապետի հրավերով էջմիածին էր եկել Զվարթնոցի ավերակների ուսումնասիրության համար: Տեր-Սարգսյանը Թորամանյանի հետ վիճելիս շարունակ հիշատակում է իր սխտեմատիկ բարձրագույն կրթություն ստանալը: Թորամանյանը, վստահ իր տեսակետի վրա, պատասխանում է նրան. «Պարոն, վրաս այլուրուտ տեսնելով գիս ջաղացպան մի կարծեք, թերևս ես ալ ունենամ ձեզ պես պարծենալու առիթներ: Պահ մը ենթադրենք, թե ես ոչ ուսում առած եմ և ոչ ալ արտասահման տեսած: Երբ տեղին վրա գոյություն ունին իրական փաստեր և ըստծներս ապացուցանող որոշ բեկորներ, ի՞նչպես կարող եմ ձեր ուզածին պես մտածել»: Այնուհետև, ինչպես շարունակում է Թորամանյանը, ճարտարապետ Քրիստափոր Տեր-Սարգսյանի և Մեսրոբ Մազիստրոսի հետ Զվարթնոց մեկնելով և ավերակների վրա ստուգելով վիճելի հարցերը, «պերճախոս իրականության առջև պ. Տեր-Սարգսյան ոչ միայն դարմացմամբ ընդունեց այս հետաքրքրական իրողությունը, այլև վաղաժանոթ բարեկամի մը նման թևս մտած խնդրեց ինձի ցույց տալ իրեն այն բոլոր մասերը, որոնք ավերակի վերակազմության լրացուցիչները կկազմեին: ...պ. Տեր-Սարգսյան լիովին ընդունելով ներքին հարկերու վերաբերյալ բոլոր ցուցմունքներս՝ միայն անհամաձայն մնաց ինձ հետ գմբեթի կազմության մասին»¹:

Այդ բոլորից հետո էլ շղաղարեցին հայածանքները Թորամանյանի դեմ: Մեսրոբ Մազիստրոսը Թորամանյանի անվանը կայցնելով «վարպետ» կամ «ուս-

¹ Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հատ. 11-երևան, 1948, էջ 283:

տա» մակդիրը, դրանով փորձում էր ցույց տալ, որ չի ընդունում Թորամանյանին որպես բարձրագույն կրթության տեր մասնագետի:

Անկարող լինելով հաշտվել Էջմիածնի հեղձուցիչ մթնոլորտի հետ և տանել իրեն դեմ նյութած հալածանքները, նա մի բողոքով դիմում է Ն. Մառին և խնդրում նրա պաշտպանությունը: «Այդ բողոքը, — գրում է Թորամանյանը, — բխած է այն երբեմնի ստորացուցիչ արհամարհանքեն, որուն գառնությունը երկար ատեն ճաշակեցի Էջմիածնի պարիսպներուն մեջ»:

Սակայն այդ գառնությունները շքնկճեցին, այլ ընդհակառակը է՛լ ավելի կոփեցին նրա կամքն իր գիտական հակառակորդների նկատմամբ վճռական հաղթանակ տանելու գործում: Վերահաս դեպքերը միանգամայն նպաստավոր եղան նրա համար: Բազրատունյաց մայրաքաղաք Անիում տարվող սիստեմատիկ հնագիտական աշխատանքների ընթացքում, 1906 թ. բացվեցին ս. Գրիգոր (Գաղկաշեն) տաճարի մնացորդները, որոնց շնորհիվ մեծ շափով բարձրացավ Թորամանյանի հեղինակությունը և իսպառ փարատվեցին այն տարակուսանքները, որ կային ոմանց մոտ Զվարթնոցի վերակազմության կապակցությամբ: Ինչպես հայտնի է պատմական աղբյուրներից, այդ եկեղեցին կառուցվել էր Զվարթնոցի օրինակով և ամբողջովին վերարտադրում էր վերջինիս հատակագծային ու տարածական ձևերը: Պեղումների հետևանքով հայտարբերվեց նաև Գաղիկ Բազրատունու քարե արձանը, իր կառուցած եկեղեցու մոդելի հետ միասին: Զվարթնոցի վերակազմության նախագծի շուրջը եղած գիտական վեճի ելքը որոշեց հենց այս մոդելը, ըստ որի Գաղկաշենը եռահարկ էր և ուներ մոտավորապես այն ձևերը, ինչ նախքան մոդելի հայտնաբերելը իր նախագծում վերարտադրել էր Թորամանյանը: Անդրադառնալով իրեն համար ճակատագրական նշանակություն ունեցող այդ հետաքրքրական դեպքին, Թորամանյանը միայն համեստաբար նշում է. «Վերակազմությանս ճշտության իրրև ապացույց, տարիներ հետո, երևան եկան պր. Ն. Մառի ջանքերով, Անիի Գաղկաշեն, ս. Գրիգոր և Բանայի եկեղեցիները»¹:

Թորամանյանի համար արտակարգ քարենպաստ նշանակություն ունեցավ Նիկողայոս Մառին ծանոթանալու հանգամանքը, «... որուն հովանավորության տակ, — ինչպես նշում է ինքը, — խաղաղ և ապահով կատարեցի ոչ միայն ինձի, այլև համայն գիտական աշխարհի համար շահեկան մի մեծ գործ»²:

Բարձր գնահատելով Թորամանյանի արժանիքները, Մառը ստեղծեց հնարավոր պայմանները նրա աշխատանքների համար, հովանավորեց նրան տրեսասպես և բարոյապես: Դրա հետ միասին Մառը հաղորդակից դարձրեց նրան ռուսական գիտական շրջաններին, վերջինիս ուշադրությունը հրավիրելով Թորամանյանի կողմից կատարած շափազրությունների վրա: Մառի նախաձեռնությամբ 1905 թ. Ռուսաստանի կայսերական գիտությունների ակադեմիայի պատմա-լեզվագրական բաժանմունքին կից ստեղծվեց մի հանձնաժողով, արժեքավորելու համար Թորոս Թորամանյանի կողմից Անիում կատարած շափազրություններն ու նկարները: Հանձնաժողովը, որը բաղկացած էր ռուսական գիտության և ճարտարապետության ականավոր գործիչներից՝ ակադեմիկոսներ՝ Կ. Գ. Զալեմանից, Ն. Պ. Կոնդակովից, Ս. Ֆ. Ուդենբորգից և ճարտարա-

¹ Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հատ. 11, Երևան, 1948, էջ 289:

² Նույն տեղում, էջ 287:

պետության ակադեմիկոսներ՝ Ն. Վ. Սուլթանովից ու Մ. Տ. Պրիորբեժենսկուց և վերջապես նշանավոր հայագետ Ն. Յա. Մառից, հավանություն տվեց Թորամանյանի կատարած աշխատանքներին: Այդ առթիվ կազմած արձանագրության մեջ կարդում ենք. «Հանձնաժողովը միաձայն որոշեց հայտնել պատմա-լեզվադրական բաժանմունքին ի գիտություն, որ Թորոս Թորամանյանի նկարներն ու շափագրությունները գիտական և գեղարվեստական մեծ արժանիք են ներկայացնում և Անիում կատարելիք նրա հետագա աշխատանքները շատ օգտակար են գիտության և արվեստի համար»:

Այնուհետև Մառը մի շարք այլ ձեռնարկումներ էլ է կատարում՝ ուսական գիտական շրջաններին Թորամանյանին ծանոթացնելու համար: Նա անձամբ թարգմանում է Թորամանյանի «էջմիածնի տաճարը» աշխատությունը և նպաստում նրա հրատարակմանը (որն ի դեպ սկզբում լույս է տեսել ուսերեն լեզվով, ապա հետո հայերեն, և մինչև օրս էլ Թորամանյանի ուսերեն լեզվով հրատարակված միակ աշխատությունն է): Այդ աշխատության լույս ընծայման առթիվ հրապարակված իր հոդվածում Մառը գրում է. «Ես առավել առողջ լույս եմ սպասում հարտարապետական հուշարձանների լեզվից, երբ մենք սովորենք այն հասկանալ: Թորամանյանի մեջ ես տեսնում եմ այդ լեզվի առաջին ուսուցիչին»¹:

Եթե Մառին ծանոթանալու և այնուհետև նրան աշխատակցելու հանգամանքը նշանավորվեց Թորամանյանի կյանքում որպես կարևոր իրադարձություն ու մեծ չափով նպաստեց նրա գիտական աշխատանքներին, ապա տեղին կլիներ նշել, որ հանձնեց Թորամանյանի՝ Մառը ունեցավ հմուտ և իր գործին ֆանատիկորեն նվիրված մի զինակից: Ակադեմիկոս Հովսեփ Օրբելին Թորամանյանի մասին պատմած իր հիշողություններից մեկում նշում է, որ նա հաճախ հիմնավորում էր Մառի մտքերը ճարտարապետության նյութերով և աշխատելով միմյանցից անջատ, նրանց տեսակետները հայ արվեստի և ճարտարապետության հարցերում մեծ մասամբ համընկնում էին:

Շուրջ ութը տարի, 1904—1912 թվականները, Թորամանյանը հանդիսանում էր Մառի ղեկավարությամբ Անիում տարվող հնագիտական պեղումների մասնակիցը: Այդ ժամանակաշրջանում նա անգնահատելի ծառայություն մատուցեց գիտությանը, մանրակրկիտ կերպով չափազանցելով ու լուսանկարելով բացված հուշարձաններն ու նրանց բազմաթիվ բեկորները, կազմելով Բազկաշենի, Բախտազեկի և Հովվի եկեղեցիների, ինչպես և Անիի կամուրջի վերակազմության նախագծերը և զբաղվելով ճարտարապետական առանձին հուշարձանների նորոգման ու ամրացման աշխատանքներով: Սակայն նրա գիտական հետազոտությունների շրջանակը շատ ավելի լայն էր, քան այն տերիտորիան, որ սահմանափակված էր Անիի պարիսպներով: Նա Շիրակի, Արագածոտնի, Այրարատի նահանգներում ոտքով շրջում էր գյուղից-գյուղ, այցելում մի հուշարձանից մյուս հուշարձանը, հետազոտում, չափագրում ու լուսանկարում հայ ժողովրդի բազմադարյա շինարարական գործունեության տարբեր շրջաններին վերաբերող կանգուն և կիսավեր հուշարձաններ, կուտակելով հայկական ճարտարապետության վերաբերյալ չափազանց հարուստ նյութ: Այդ առումով,

¹ Н. Я. Марр, По поводу работы архитектора Т. Тораманяна: «О древнейших формах Эчмиадзинского храма—Записки вост. отд. Императорского русского археологического общества, том XIX, С. Петербург, 1909.

կարելի է ասել, որ Թորամանյանը հայ ճարտարապետությանը մատուցեց այն ծառայությունը, ինչ Կոմիտասը՝ հայ երաժշտությանը:

Թորամանյանը չէր պատկանում այն գիտնականների թվին, որոնք տարիներով անմշակ են թողնում հավաքած նյութերը, դրանով իսկ գիտական աշխարհի համար անմատչելի դարձնելով այն: Նա սխտեմատիկաբար գիտական մշակման էր ենթարկում իր հավաքած նյութերը և հանդես էր գալիս պարբերական մամուլում, բոլորի սեփականությունը դարձնելով իր բեղմնավոր հետազոտությունների արդյունքները:

Սկսած 1905 թվականից Թորամանյանը սխտեմատիկաբար հանդես է հկել պարբերական մամուլում բազմաթիվ նամակներով ու հոդվածներով՝ հայրենի երկրի հնությունների վերաբերյալ: Բացի «Մուրճ» ամսագրում հրատարակված «Զվարթնոց եկեղեցին» հետաքրքրական հոդվածից, նա «Ախուրյան» լրագրի և «Հուշարար» ամսագրի էջերում 1905—1908 թթ. հրատարակել է իր «Նամակներ Անիից» հոդվածաշարը, և մի շարք հոդվածներ Տեկորի տաճարի, Գագկաշեն և Հովվի եկեղեցիների, Անի, Երվանդակերտ և Երվանդաշատ քաղաքների մասին: Երվանդ Լալայանի կողմից հրատարակվող «Ազգագրական Հանգէս»-ում տարբեր տարիների ընթացքում լույս են տեսել Թորամանյանի «էջմիածնի տաճարը», «Գավիթ կամ ժամատուն հայոց հնադույն եկեղեցիներուն մեջ», «Անի քաղաք, թե ամրոց» ծանրակշիռ հետազոտությունները: Գիտական մեծ արժեք են ներկայացնում «Գեղարվեստ» ամսագրում լույս տեսած «Հայաստանի արքունական և իշխանական ապարանքները և անոնց ներքին կենցաղը», «Անահիտ» ամսագրում հրատարակված մի քանի հոդվածները՝ նվիրված հայ ճարտարապետության կազմավորման և զարգացման հարցերին:

Հաղթահարելով նյութական մեծ դժվարություններ, որոշ մեկենասների օժանդակությամբ Թորամանյանին հաջողվում է հրատարակել նաև առանձին աշխատություններ: Դրանցից կարևոր է հիշատակել «Տեկորի տաճարը» մոնոգրաֆիկ աշխատությունը, որը լույս տեսավ 1911 թ. և ներկայացնում էր Թորամանյանի աչքի ընկնող հետազոտություններից մեկը: Նրանում հեղինակը շահմանափակվելով հուշարձանի մանրակրկիտ ուսումնասիրությամբ ու վերակազմությամբ, քննում է հայ ճարտարապետության զարգացման մի շարք սկզբունքային հարցեր: Գրքի սկզբում իր մեկենաս՝ Հարություն Գարանյանին ուղղված հուզիչ տողերում, Թորամանյանը նշում է. «... միայն բարձրագույն զարգացում ունեցողներու սեփականությունը չէ գիտության մշակը քաջալերելու գիտակցությունը և ոչ ալ ոսկիներով բեռնավորված հարուստին մենաշնորհն է խրախույսի կարոտ գրական աշխատավորին նպաստելը, այն ալ հաճախ իբրև ռդորմություն»¹:

Խուսափելով հայ հոգևորականների, կամ հարուստների օժանդակությունից, ամեն առիթով պարսավելով նրանց դեպի հայրենի կուլտուրան ունեցած անտարբեր վերաբերմունքի համար, Թորամանյանն իր գիտական հետազոտությունների ընթացքում գերազանցապես հենվում էր ժողովրդի դեմոկրատական խավերի աջակցության վրա:

Նախասովետական շրջանում նա ոչ միայն խոշոր աշխատանք կատարեց հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգության ուսումնասիրման և գիտական արժեքավորման ասպարեզում, այլև զբաղվեց այդ ժառանգության լայն պրոպագանդայով՝ առաջավոր հայ մտավորականության և գիտական շրջան-

¹ Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911, էջ 5:

ներում: Բացի պարբերական մամուլում հրատարակած բազմաթիվ նամակներից և հոդվածներից, նա հանդես էր գալիս գեկուցումներով և հաղորդումներով, կամ սիրալիր կերպով տրամադրում տարիների քրտնաջան աշխատանքի շնորհիվ հավաքած դիտական իր հարուստ նյութերը հայ ճարտարապետութեամբ հետաքրքրվող հայրենի և օտարազգի գիտնականներին:

Երբ 1913 թվականին Հայաստան ժամանեց Վիեննայի համալսարանի գիտական արշավախումբը, որը գլխավորում էր նշանավոր արվեստագետ Հովսեփ Ստրժիգովսկին, Թորամանյանը մեծ շափով նպաստեց նրա աշխատանքներին: Ընդունելով Ստրժիգովսկու առաջարկը՝ իր հարուստ նյութերի հիման վրա հայ ճարտարապետության պատմության վերաբերյալ համատեղ աշխատություն հրատարակելու մասին, նա մեկնում է Վիեննա, տանելով իր հետ տարիների ընթացքում կատարած իր բազմաթիվ շափագրություններն ու լուսանկարները: Նյութերը լրացնելու նպատակով Հայաստան վերադառնալով, Թորամանյանը շարունակեց իր գիտական հետազոտությունները: Համաշխարհային առաջին պատերազմը զրկեց նրան հնարավորությունից՝ վերականգնել կապերը Ստրժիգովսկու հետ: Վերջինս օգտվելով այդ հանգամանքից, 1918 թ. առանձին հրատարակեց իր «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» երկհատոր ստվար աշխատությունը, ամբողջովին օգտագործելով Թորամանյանի շափագրությունները, ֆոտոնկարներն ու հիմնական տեսակետները հայ ճարտարապետության վերաբերյալ: Եվրոպական գիտնականի այս վերաբերմունքը մեծ շափով վշտացրեց Թորամանյանին: Միայն ավելի ուշ, Սովետական Հայաստանի կառավարության միջամտությամբ նրան հաջողվեց Վիեննայից հետստանալ իր նյութերի որոշ մասը, իսկ մնացածը՝ այդպես էլ չվերադարձվեց:

Խոշոր հարված եղավ Թորոս Թորամանյանի համար նաև իր նյութերի որոշ մասի անդարձ կորուստը 1918 թվականին, երբ դաշնականների անփառունակ տիրապետության հետևանքով երկրում ստեղծված իրադարձությունը ստիպեց նրան շատերի հետ միասին գաղթել Ալեքսանդրապոլից: Դաշնակցական կառավարության առանձին ներկայացուցիչներ, որոնք իրենց բարիքները վագոնները լցրած գլխապատառ ճողոպրում էին Ալեքսանդրապոլից, շնայած Թորամանյանի թախանձանքներին, ոչ մի շափով չօժանդակեցին նրան՝ արկղներում տեղավորված գիտական իր նյութերը փրկելու գործում: Գիտնականի համար դժվար էր պատկերացնել ավելի մեծ կորուստ, քան տարիների քրտնաջան աշխատանքի արդյունքը հանդիսացող գիտական նյութերից զրկվելը: Դա անհամեմատ ավելի ծանր էր Թորամանյանի համար, քան այն բոլոր զրկանքներն ու դժվարությունները, որ հանդիպեց նա իր հետազոտական աշխատանքների ընթացքում, նախասովետական Հայաստանում: Այդ է պատճառը, որ մինչև իր կյանքի վերջն էլ նա կսկիծով էր հիշում ու խորապես վերապրում այդ կորուստը:

* * *

Հայ ժողովրդի ճարտարապետական ժառանգությունն ուսումնասիրելու և արժեքավորելու, նրան գիտության սեփականությունը դարձնելու համար, իհարկե, բավարար չի կարող լինել մեկ, նույնիսկ այնպիսի բեղմնավոր գիտնականի կյանքը, ինչպիսին Թորամանյանն էր: Դրա համար, ըստ երևույթին, կպահանջվի գիտնականների շատ սերունդների սիստեմատիկ և անձնվեր աշխատանք: Բայց այն, ինչ կատարեց Թորամանյանը մենակ, այն էլ խիստ ան-

բարենպաստ պայմաններում, լոկ հիացմունք կարող է առաջացնել և խորին երախտագիտության զգացումով լցնել մեր սրտերը մեծ գիտնականի նկատմամբ: Անձնական հետազոտությունների ամուր պատվանդանի վրա Թորամանյանն ստեղծեց մի կուռ տեսություն, որը կոփվեց հայրենական և օտարազգի որոշ գիտնականների՝ հայ ճարտարապետության գնահատման հարցերում ունեցած բազմաթիվ աղավաղումների ու խեղաթյուրումների գեմ մղած անհաշտ պայքարի բովում:

Թորամանյանի գիտական հայացքները հայտնի էին նրա այն բազմաթիվ հողվածներից ու աշխատություններից, որոնք հրատարակվել էին դեռևս նախասովետական շրջանում, սակայն նրանք ամբողջացան ու մատչելի դարձան մեզ համար շնորհիվ նրա «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» երկհատոր սովոր ժողովածուների հրատարակման: Թեև դրանք չեն պարունակում, ինչպես ծրագրում էր Թորամանյանը, հայ ճարտարապետության պատմության սիստեմատիկ շարադրությունը, բայց և այնպես հանդիսանում են իսկական հանրագիտարան հայ ժողովրդի բազմազարյա շինարարական-ճարտարապետական գործունեության վերաբերյալ և լրիվ կերպով հնարավոր են դարձնում պատկերացնել շինարարական արվեստի ու ճարտարապետության դարգացման տարբեր փուլերը հին և միջնադարյան Հայաստանում:

Թորամանյանի խոշորագույն ծառայությունը հայ արվեստի նկատմամբ նախ և առաջ այն է, որ նա հանգամանորեն և հիմնավոր կերպով քննադատության ենթարկեց եվրոպական մի շարք գիտնականների և ճանապարհորդների, հատկապես Դյուբուա դը Մոնպերեի, Տեքսցեյի, Օգյուտ Շուազիյի, Շառլ Դիլի, Հովսեփ Ստրժիգովսկու և ուրիշները՝ սխալ տեսակետները հայ արվեստի և ճարտարապետության պատմության այս կամ այն հարցի մասին: Եվրոպական այդ ականավոր գիտնականների սխալների քննադատման ընթացքում Թորամանյանը հանդես է բերում խոր գիտելիքներ ոչ միայն հայ ճարտարապետության, այլև ճարտարապետության համընդհանուր պատմության հարցերում: Նա իր տեսակետները հիմնավորում է կոնկրետ փաստերով, ցույց տալով այն իրավական պատկերը, որով բնութագրվում է հայկական ճարտարապետության զարգացումն առանձին շրջաններում:

«Հայոց ճարտարապետության և գեղարվեստի մասին, — գրում է Թորամանյանը, — հայ և օտար լեզուներով շատ տարիներե ի վեր գոյություն ունի մի ընդարձակ գրականություն, սակայն այդ գրականությունը, աննշան բացառությամբ, լուրջ ուսումնասիրություններ չեն»¹: Ինչպես նշում է այնուհետև Թորամանյանը, Հայաստան եկած բազմաթիվ եվրոպացի գիտնական ճանապարհորդներ, որոնց մի մասը ճարտարապետներ են եղել, «... միշտ հակասական և իրականին անհամապատասխան կարծիք են հայտնել այդ հիշատակարանների մասին՝ թուրքիկ տպավորության ներքև: Ոմանք բյուզանդական են պարծել, ոմանք արաբական, ոմանք սելջուկյան և մինչև իսկ հնդկական տարրեր նշմարողներ եղել են կանգուն կամ կիսականգուն հուշարձանների ոճերում»²:

Անդրադառնալով հայ գիտնականներից ոմանց մոտ նկատվող եվրոպական գիտության նկատմամբ ունեցած ստորաքարշական վերաբերմունքին, Թոր-

¹ Թ. Թորամանյան, Նյութեր հայ ճարտարապետության պատմության, հատ. 1, Կրեան, 1942, էջ 48:

² Նույն տեղում, էջ 82:

րամանյանը «Տեկորի տաճարի» առաջարանում նշում է. «Եթե կկարծեն, որ եվրոպացի գիտնականը, արվեստագետը իրենցմե ավելի խելք ու կարողություն ունի և իրենցմե ավելի լավ կտեսնե ճշմարտությունը, շատ կը սխալվին: Այս կարծիքով նախ ինքզինքնին կը զրկեն արժանապատվություն... Ըստ կկարծեմ, որ բավական է այլևս եվրոպացի գիտնականին մեծ մասամբ իրականություն և ճշմարտություններն ու վճիռներն թողուլ, որ պատմությունը անմահացնե: Մինչև ե՛րբ անոնք պիտի գրեն և մենք թարգմանենք որպես երկնային պատգամներ մեր գիտության կարոտ հասարակությանը մատակարարելու համար, այն ալ մեր հարազատ ցեղի (այսինքն՝ ժողովրդի — Վ. Հ.) ու արվեստի պատմությունը, որոնք երբեք չեն կարող սիրել և նվիրվել այնպես, ինչպես մենք: Ինչու համար մեր գիտնական մասնագետներու երևակայության մեջ այնչափ խոշորացեր է եվրոպացին, և իրենք փորացեր են ու չեն հավատար, որ իրենք ալ ունեն տաղանդ, կարողություն կազմելու այնպիսի հայագիտական մատենագրարան մը, որուն առջև եվրոպացի գիտնականն ալ պատկառանք զգա և փոխանակ տգետ ու անկարող առաջնորդներու տված տեղեկություններն արձանագրելու, այնտեղ գտնե իր փնտրած փաստերն ու ճշմարտությունները»¹:

Թորամանյանը վճռականապես հանդես եկավ օտարազգի այն գիտնականների դեմ, որոնք փորձում էին կտրել հայ ճարտարապետության առաջացման նախադրյալները հայրենի հողից և ժողովրդից ու դիտել այն, որպես բյուզանդական կամ այլ երկրների ճարտարապետության օրգանական մասը:

Պիտի նշել, որ այս հարցում Թորամանյանի գիտական հայացքները հեղաշրջող նշանակություն ունեցան ոչ միայն հայրենական գիտության մեջ, այլև մեծ չափով նպաստեցին եվրոպական մի շարք արվեստագետների և գիտնականների սխալ կարծիքների վերանայմանը: Դրա ցայտուն օրինակը կարող է ծառայել Հովսեփ Ստրժիգովսկու «Հայերի ճարտարապետությունը և Եվրոպան» հանրահայտ աշխատությունը, որի հեղինակը, ընդունելի համարելով Թորամանյանի տեսակետը՝ հայ ճարտարապետության զարգացման ինքնուրույնության մասին, ավելի խորանալով այդ հարցում, նշում է այն ազդեցությունը, որ ունեցել է հայերի ճարտարապետությունը եվրոպական մի շարք երկրների ճարտարապետության վրա: Թեև այս աշխատությունը պարունակում է բուրժուական արվեստագիտական դպրոցին հատուկ մի շարք լուրջ սխալներ, բայց, այնուհանդերձ, նա նշանավորում է բուրժուական առանձին գիտնականների մոտ նկատվող որոշակի շրջադարձը հայ ճարտարապետության գնահատման հարցերում: Դա, իհարկե, եզակի երևույթ չէ, իր ժամանակ Թորամանյանն այդ բանը մատնանշել է նաև Շառլ Դիլի և բուրժուական արվեստագիտության այլ ներկայացուցիչների նկատմամբ:

Մեծ կրթությունամբ պայքարելով հանդերձ հայ ճարտարապետության ինքնուրույնությունը ճանաչելու համար, ընդգծելով նրա առանձնահատուկ և բնորոշ հատկանիշները, Թորամանյանը, սակայն, չի մեկուսացնում այն ճարտարապետության զարգացման ընդհանուր պրոցեսից, չի սահմանափակում ազգային նեղ շրջանակներով, այլ ընդունում է ժողովուրդների միջև գոյություն ունեցող տնտեսական-քաղաքական և կուլտուրական փոխհարաբերությունների հողի վրա տեղի ունեցող փոխազդեցությունը:

«Ճշմարիտ է, — գրում է Թորամանյանը «Տեկորի տաճարի» առաջարա-

¹ Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, Թիֆլիս, 1911, էջ Ժբ-Ժթ.:

նում, — որ հայ գեղարվեստը հաճախ ենթարկվեր է դրացի զարգացած ազգերու ազդեցության, սակայն պարզ բաղդատություն մը բավական է ապացուցանելու, որ անհամեմատ ավելի շատ են ստեղծագործությունները, քան փոխառությունները: Փոխառություններն ալ հազիվ թե գործածված են նույնությամբ, առանց զանոնք հայացնելու: Եվ ինչքան իրենք ազդվեր են օտարեն, նույնչափ ալ ազդեր են իրենցմե շատ ավելի մեծ ազդերու վրա:

Պահ մը ենթադրենք, որ օտարներու ազդեցությունը շատ զորեղ լինի հայ արվեստի մեջ, մի՞թե այդքան արհամարհելի է այս պարագան: Ես կը կարծեմ, որ ավելի քան պատվաբեր պետք է լինի, որովհետև չկա մի ազգ պատմության մեջ, որ բոլորովին կղզիացած ապրելով հասներ քաղաքակրթության դագաթնակետին և ինք միայն ներգործեր ուրիշ ազգերու վրա, առանց ուրիշն ազդվելու... Արվեստ, գիտություն, լեզու, գրականություն ամեն ազգի մեջ զարգացեր են միշտ մեկըմեկե ազդվելով, և այս է քաղաքակրթության զարգացման բնական օրենքը...: Հին հայերը եթե դարե ի դար փոխվեր են և օտարներու քաղաքակրթությունը իրենց մեջ մտցուցեր են, կը նշանակե, թե երբեք հետ չեն մնացեր իրենց շուրջը զարգացող քաղաքակրթության հեղաշրջումներեն, և անրնդհատ մրցեր են ամեն ճյուղի մեջ, առանց, սակայն, մեքենաբար հետևողներ լինելու, համառ կերպով պահեր են իրենցը և փոխառությունները ենթարկել են իրենց սեփական ճաշակին»¹:

Այդ տեսանկյունից մոտենալով հայ ճարտարապետության կազմավորման և զարգացման հարցերին, Թորամանյանը նշել է այն բարերար ազդեցությունը, որ կրել են իրենց վրա, ասենք, հայկական բարձրավանդակում ապրող տարբեր ցեղերի կառուցողական տեխնիկան ու ճարտարապետությունն ուրարտականից: Ստրկատիրական շրջանում հունա-հռոմեական, իսկ վաղ ֆեոդալիզմի շրջանում՝ սիրիական և այնուհետև բյուզանդական ճարտարապետության որոշ ազդեցություն եղել է հայկական ճարտարապետության վրա: Սակայն դրա հետ միասին Թորամանյանն այդ ազդեցությունները երբեք չի դիտել որպես հայ ճարտարապետության զարգացման հիմնական ազդակ: «Ինչպես հին ասորաքաղաքական, սասանական, — նշում է Թորամանյանը, — նույնպես հունա-հռոմեական արվեստներու ներգործությունները երկարատև չեն եղած, շուտով ձուլված են հայ արվեստի որոշ ինքնուրույն ոճին մեջ և լիովին կերպարանափոխված են»²:

Հայտնի է, որ Հայաստանի վաղ քրիստոնեական եկեղեցական ճարտարապետությունը Թորամանյանը կապում է քրիստոնեական աշխարհի, և հատկապես սիրիական եկեղեցական ճարտարապետության հետ, շրացառելով հանդերձ նրա կազմավորման նաև տեղական նախադրյալները:

«Հայոց եկեղեցական ճարտարապետության մեջ բոլորակր կամ բազմակյունին գրեթե սկսվում է VII դարում, — նշում է մի առիթով Թորամանյանը, — ավելի առաջ քրիստոնեական ճարտարապետության սկզբնավորություն են մինչև VII դար, եկեղեցական հատակագծային ոճը խառն էր հին հունա-հռոմեական սելլաների և բազիլիկների հետևողությամբ շինվածներով: Սակայն Հայաստանի ժողովուրդը, որ իր առանձին ճաշակն ուներ, և երկարատև միօրինակություն չէր սիրում, դեռ V դարում սկսեց շեղվել սելլաներու և բազիլիկների հետևո-

¹ Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, էջ ԺԶ--ԺԷ:

² Թ. Թորամանյան, Նյութեր, հատ. 1, էջ 203:

ղությամբ եկեղեցական հատակագծերից և սկսեց կառուցել առանձին ձևերով, որոնք ավելի արևելյան հատկանիշ ունեն, թեև զուգահեռաբար հատուկ են կենտրոնադարձում են նաև հին ավանդություններ շինվածներ, այնուամենայնիվ ընդհանուր քրիստոնեական ուղղությունն շեղվելու շրջանին, Հայաստանում սելաներն ու բազիլիկները ևս այլափոխման ենթարկվեցին, այնպես որ բազիլիկաների միայն հիշողությունը մնաց»¹։

Թորամանյանը Հայաստանի վաղ քրիստոնեական եկեղեցական որոշ հուշարձաններում, Տեկորի և Էջմիածնի տաճարների, Երեբունյի բազիլիկայի և այլ հուշարձանների ճարտարապետական որոշ ձևերում տեսնում է անտիկ ճարտարապետության տրադիցիաների առկայություն և դա միանգամայն հասկանալի է, որովհետև մի կողմից հայկական նախաքրիստոնեական արվեստի գծերը, որոնք կազմավորվել էին հելլենիստական և հռոմեական արվեստների ներգործությամբ, մյուս կողմից՝ Սիրիայի միջոցով Հայաստան փոխանցվող հռոմեական ճարտարապետության տրադիցիաներն իրենց դերն են խաղացել վաղ քրիստոնեական եկեղեցական ճարտարապետության կազմավորման գործում։ Անտիկ ճարտարապետության տրադիցիաների առանձին վերապրուկներ կարելի է մատնանշել նույնիսկ ծաղկուն միջնադարի հայ ճարտարապետության որոշ հուշարձաններում։

Ֆեոդալական Հայաստանի ճարտարապետության ինքնուրույն գծերի վերջնական կազմակերպման ժամանակը Թորամանյանը միանգամայն ճիշտ կերպով համարում է V դարը, երբ հայ ճարտարապետությունը նշանավորվում է մի շարք աչքի ընկնող նվաճումներով՝ ինչպես աշխարհիկ ու եկեղեցական շենքերի տիպերի ստեղծման, այնպես էլ կոնստրուկտիվ ու ճարտարապետական գեղարվեստական յուրահատուկ միջոցների մշակման ասպարեզում։

Թորամանյանի գիտական ամբողջ ժառանգության մեջ Հայաստանի V—VII դարերի ճարտարապետությունը գերիշխող տեղ է զբաղում։ Բայց Տեկորի, Երեբունյի, Էջմիածնի Մայր տաճարի և Զվարթնոցի մանրամասն հետազոտությունից, նա զբաղվել է նաև հայ ճարտարապետության ծաղկման շրջանին պատկանող մի շարք աչքի ընկնող այլ հուշարձանների՝ Էջմիածնի Հոսիսիմեի և Գայանեի եկեղեցիների, Ավանի, Պտղնու, Թալինի մեծ և փոքր, Թալիշի (Արուճի), Մաստարայի, Արթիկի, Բագարանի և բազմաթիվ այլ հուշարձանների ուսումնասիրությամբ, որը հնարավորություն է տվել նրան նշելու այն օրինաչափությունները, որոնք հատուկ են այդ շրջանի եկեղեցական շենքերին՝ հատակագծային տիպերի, ինչպես և կոնստրուկտիվ ու գեղարվեստական լուծումների տեսակետից։ Վերոհիշյալ հարցերի հետազոտության արդյունքները շարադրված են նրա «Մարաշի շրջանական հատկանիշներ», «Մասնավոր ուսումնասիրություն հայոց նախաքրիստոնեական կրոնի և համեմատություններ եկեղեցիների հատակագծերի», «Հայոց հնագույն եկեղեցիների հատակագծային ձևավերը», «Ժամանակագրական համեմատություն հայոց հնագույն եկեղեցիներու հատակաձևերու մասին» և մի շարք այլ աշխատություններում։

Երա հետ միասին ոչ սակավ տեղ է զբաղում նրա գիտական ժառանգության մեջ միջնադարյան, առանձնապես Բագրատունիների թագավորության ժամանակաշրջանի հայ ճարտարապետության ուսումնասիրությունը։ Նրա կողմից ավելի տևական ուսումնասիրության են ենթարկված Անիի եկեղեցական

¹ Թ. Թորամանյան, Նյութեր, հատ. II, էջ 80։

ճարտարապետության հուշարձանները՝ Մայր տաճարը, Գագկաշեն, Փրկիչի, Աբուղամրենց, Հովվի, Առաքելոց, Նաղշուի, Բախտադեկի և այլ եկեղեցիները՝ Թորամանյանը զբաղվել է նաև մայրաքաղաքի սահմաններից դուրս գտնվող այնպիսի նշանավոր հուշարձանների խմբերի ուսումնասիրությամբ, ինչպիսիք են Խծկոնքը, Հոռոմոսը, Մարմաշենը և այլն։ Նրա ուսումնասիրության մեջ համեմատաբար ավելի քիչ են ընդգրկված XII—XIV դդ. վանքային ճարտարապետական անսամբլները։

Այդ շրջանի եկեղեցական ճարտարապետությանն են նվիրված Թորամանյանի «Ո՞րն է իսկական Հոռոմոսի վանքը», «Գագիկի տաճարի վերակազմությունը», «Անի», «Գավիթ և ժամատուն հայոց հնագույն եկեղեցիների մեջ» և մի շարք այլ աշխատություններ։

Ի տարբերություն այն հետազոտողների, որոնք հայ ժողովրդի հարուստ ժառանգության մեջ գլխավորապես վեր են հանել եկեղեցական հուշարձանները, Թորամանյանն առաջին հետազոտողներից էր, որ հատուկ ուսումնասիրության արժանացրեց ֆեոդալական Հայաստանի աշխարհիկ ճարտարապետները՝ Անիի պալատական շենքերն ու բնակարանները, հյուրանոցներն ու իջևանատները, կամուրջներն ու պարիսպները, Հայաստանի իշխանական ամրոցներն ու գղյակները և քաղաքացիական ճարտարապետության բազմատեսակ կառուցվածքները։ Նրա՝ «Անի», «Հայաստանի արքունական և իշխանական ապարանքները և անոնց ներքին կենցաղը», «Զվարթնոցի հարավային կողմի շինությունները», «Անվո միջնաբերդի պեղումները» և մի շարք այլ աշխատություններ ու հոդվածներ նվիրված են ֆեոդալական Հայաստանի աշխարհիկ ճարտարապետության ուսումնասիրությանը։

Իր ուսումնասիրությունների մեջ Թորամանյանը հատուկ տեղ է հատկացրել նաև շինարարական արվեստի և կոնստրուկցիաների հարցերին։ Դրանց է նվիրված նրա «Շինանյութերը և նրանց գործածության կերպը հին Հայաստանում» աշխատությունը։ Նույն այդ հարցերին նա մասնակիորեն անդրադառնում է «Զվարթնոց եկեղեցին», «Տեկորի տաճարը» և այլ աշխատություններում։

Ճարտարապետական ստեղծագործության հաջողությունը Թորամանյանը կապում էր ոչ միայն ճարտարապետի, այլև կառուցող վարպետի և բանվորի ստեղծագործ աշխատանքի հետ։ «Բավական չէ գործը ղեկավարող և վառվռուն երևակայության թռչիլին իրականացման ձգտող ճարտարապետին տաղանդը, — դրո՞ւմ է նա, — եթե ճարտար արհեստավորներու համագործակցությունը շափաղցի՝ մարմնացում տալու ճարտարապետի ուղեղին մեջ ծրագրված հրաշակերտին»¹։

Թորամանյանի բոլոր աշխատությունների մեջ զգացվում է ունակ փաստերի վրա հիմնված օպտիմիստական վերաբերմունք՝ հայրենի երկրի ճարտարապետական և շինարարական արվեստի նկատմամբ, սակայն դա նրա մոտ չի հնչում որպես ազգային սնապարծություն, այլ արդյունք է սեփական ժողովրդի ստեղծագործական ուժերի բարձր գիտակցման։ «... Որչափ բարձր արժանիքներով օժտված են գեղարվեստական հիշատակարանները, — նշում է նա, — այնպան բարձր են դանոնք կանգնողներու ստեղծագործական արժանիքը իրենց ապրած դարաշրջանին մեջ»²։

¹ Թ. Թորամանյան, Նյութեր, հատ. I, էջ 282։

² Նույն տեղում, հատ. II, էջ 80։

Պատմականորեն քննելով այն պայմանները, որոնցում զարգացել և ստեղծագործական բարձր նվաճումների է հասել ֆեոդալական Հայաստանի ճարտարապետությունը, Թորամանյանը կարևոր տեղ է տալիս հայ ժողովրդի ստեղծագործական դերին, նշելով, որ նա ընդունակ է եղել նույնիսկ անբարենպաստ պայմաններում կերտել բարձրարվեստ ճարտարապետական երկեր: Մի առիթով նա գրել է. «Երբ Բյուզանդիայի և Պարսկաստանի նենգավոր քաղաքականության մշտապես զոհ զառաժ բուռ մը հայ ժողովուրդը ծանր հարկերի և տուրքերի տակ ձնշված կկանգնե Զվարթնոցի նման մի գլուխ գործոց և զուգրնթացաբար մեծագործություններ համարվելու շափ ուրիշ բազմաթիվ գեղարվեստական կոթողներ, եթե բյուզանդական կալսարության գանձարանն ունենար յուր ձեռքին մեջ, շատ ս. Սոֆիաներ կարող էր կանգնել, որովհետև Զվարթնոցը մենակ չէ մնացած Հայաստանի մեջ, ինչպես միայնակ է մնացել ս. Սոֆիան բյուզանդական բովանդակ կալսերության մեջ»¹:

Թորամանյանի համար հայ ճարտարապետության ուսումնասիրության հիմնական աղբյուրը՝ դա ունեալ հուշարձաններն են: Նրան խորթ էր դիտական այնպիսի մեթոդը (որ գործադրում էին նախասովետական շրջանի հայրենի և օտարազգի որոշ գիտնականներ, և որի առանձին մնացուկները մենք դժբախտաբար տեսնում ենք նուև մեր օրերում), երբ հետազոտությունների համար հիմք են ծառայում ոչ թե կոնկրետ հուշարձանների ուսումնասիրության հետեւիվանքով հավաքած նյութերը, այլ վերացական դատողությունները, կամ լավագույն դեպքում ուրիշի հավաքած ու հրապարակած նյութերն ու տեսակետները: Բացի կենդանի հուշարձանների լեզվից, Թորամանյանը մեծ նշանակություն էր տալիս նաև մատենագրական և հնագիտական տվյալներին: Նա ընդգծում է, որ պատմական գրականությունը պիտի մշակի ինքը արվեստագետը, և ոչ թե վստահի այն պատմաբանի, որովհետև արվեստին վերաբերող առանձին արժեքավոր տեղեկությունները կարող են վրիպել նույնիսկ լավ պատմաբանի ուշադրությունից: Ըբ բոլոր աշխատություններում Թորամանյանը հանդես է բերում հայկական մատենագրական աղբյուրների մեծ իմացություն և հմտորեն օգտագործում, դրանց հուշարձանների թվագրման ու պատմության համար:

Թորամանյանը մեծ նշանակություն էր տալիս քննադատությանը, դիտելով այն որպես գիտության զարգացման կարևորագույն ազդակներից մեկը: «Ոչ ոք թող չկարծե, որ ես քննադատությունեն կր խորշիմ, կամ կվախնամ,— գրում է նա «Տեկորի տաճարի» առաջաբանում,— ընդհակառակը, շափազանց սիրող եմ, որովհետև միանգամայն համոզված եմ, որ առանց արդար և անաչառ քննադատության բովեն անցնելու, անկարելի է զուտ ճշմարտությունը գտնել»²:

Անծանոթ լինելով արվեստի զարգացման հարցերը մարքս-լենինյան ուսմունքի լույսով քննելու մեթոդին, որպես հայ ճարտարապետության զարգացման բարդ երևույթների ճշմարիտ մեկնաբանման, շատ անգամներ է նա իր հետազոտություններով օբյեկտիվորեն հանդել արվեստի մատերիալիստական ճանաչողությանը: Ի տարբերություն իրեն ժամանակակից բուրժուական շատ արվեստագետների, որոնք արվեստը դիտում էին որպես հասարակական կյանքից անկախ մի երևույթ, Թորամանյանը հայ ճարտարապետության զարգացման հարցերը գերազանցապես կապում էր սոցիալական կյանքի միջավայրի հետ:

¹ Թ. Թորամանյան, Նյութեր, հատ. II, էջ 77—78:

² Թ. Թորամանյան, Տեկորի տաճարը, էջ ԻԲ:

Մեծ է և բազմաբովանդակ Թորամանյանի գիտական ժառանգությունը, նա խոշոր ներդրում է կատարել հայ ճարտարապետության գիտական պատմության մշակման գործում և ստեղծել ամուր պատվանդան, որի վրա հենվելով պիտի ընթանա հայ ճարտարապետության հետագա ուսումնասիրությունը:

Բացի առաջավոր գիտնական լինելուց, Թորամանյանը պատկերանում է մեր առաջ նաև որպես հասարակության ակտիվ անդամ, մեծ հայրենասեր և առաջավոր մտավորական: Նա հայ ժողովրդի լավագույն զավակների հետ միասին նախասովետական շրջանում պայքարել է հայ հողևորականների և հարուստների դեմ, որոնք հայրենի երկրի կուլտուրական ժառանգության նկատմամբ ցուցաբերում էին անհանդուրժելի վերաբերմունք: Նա պայքարել է իր ժողովրդի ստեղծագործ ուժերի և արժանապատվության ճանաչման համար: Դրա համար է, որ մեր մեծատաղանդ բանաստեղծ Հովհաննես Թումանյանը, խոսելով Թորոս Թորամանյանի մասին, իրեն հատուկ անմիջականությամբ դռչել է. «... Փառք և պարծանք գիտության մարդկանց ու հատկապես պ. Թորամանյանին, որ մեր ազդի մեծությունը ավերակների միջից հանելով՝ ոչ միայն օտարների առջև, այլև մեր աչքում դարձնում են մեզ մեծ ու հարգելի»¹:

Չի կարելի ասել, որ Թորամանյանի գիտական ժառանգությունը զերծ չէ առանձին թերություններից, որ նրա որոշ դրույթները այժմ ամբողջովին ընդունելի են մեզ համար: Կարդալով Թորամանյանին, մենք ականատես ենք լինում երբեմն այնպիսի փաստի, երբ միևնույն հարցի համար նա տալիս է տարբեր, որոշ դեպքում միմյանց հակասող մեկնաբանություն: Լայն համեմատություններ կատարելով բյուզանդական, սիրիական և այլ ճարտարապետությունների հետ, Թորամանյանը, սակայն, հայ ճարտարապետության զարգացման պրոցեսը չի փորձում կապել Անդրկովկասի մյուս ժողովուրդների ճարտարապետության զարգացման պրոցեսի հետ, չի որոնում այն ընդհանրությունները, որ առկա են եղել այդ ժողովուրդների ճարտարապետության և արվեստի մեջ՝ սոցիալ-տնտեսական և աշխարհագրական պայմանների ընդհանրության և տեղական կուլտուրական կապերի ու ստեղծագործական փոխհամագործակցության հիման վրա: Առանձին դեպքերում Թորամանյանի մոտ նկատվում է նաև հայ ճարտարապետության վրա օտար ազդեցությունների շափի գերուգնահատում:

Չնայած նրան, որ նշված թերությունները չեն նսեմացնում Թորամանյանի գիտական ժառանգության ընդհանուր առմամբ բարձր արժանիքները և մասամբ պայմանավորված են այն կոնկրետ միջավայրով, որում աշխատում էր մեծ գիտնականը, այնուամենայնիվ, պարտավորեցնում են մեզ ուշադիր ու խորազնին կերպով ուսումնասիրել այդ ժառանգությունը, և քննադատական մոտեցում ունենալ: Ի դեպ պետք է նշել, որ մինչև այժմ Թորամանյանի գիտական ժառանգությունը հատուկ ուսումնասիրության չի արժանացել, մինչև հիմա լույս չի ընծայվել նրա կյանքի բեղմնավոր ուղին արժեքավորող որևիցե ծավալուն աշխատություն: Ժամանակն է, որ այդ ուղղությամբ կոնկրետ քայլեր արվեն, որը մեծապես կնպաստի նրա ժառանգության յուրացմանը:

¹ Հովհ. Թումանյան, Երկերի ժողովածու, հատ. 4-րդ, էջ 460:

* * *

Նախասովետական շրջանում ծավալած իր բեղմնավոր գիտական գործունեության ընթացքում, շնորհիվ անբարենպաստ պայմանների, Թորամանյանը չկարողացավ լրիվ շահով դրսևորել իր տաղանդի ամբողջ ուժն ու կարողությունը: Միայն Հայաստանում սովետական կարգեր հաստատվելուց հետո նրա համար գործունեության լայն ասպարեզ բացվեց ու գիտական աշխատանքների համար նորմալ պայմաններ ստեղծվեցին: Որպես Հայաստանի պատմական հուշարձանների պահպանության Կոմիտեի հիմնադիրներից և նրա գործոն անդամներից մեկը, նա ամենամոտիկ մասնակցությունն ունեցավ հայ ժողովրդի բազմադարյան հուշարձանների պահպանության և ուսումնասիրության աշխատանքների կազմակերպմանը: Նա հանդիսացել է Հայաստանի գիտության ու արվեստի ինստիտուտի գիտական աշխատակիցը: Նա մասնակցել է հնագիտական մի շարք արշավախմբերի աշխատանքներին, գլխավորել հնագիտական պեղումները Վաղարշապատում և Գեղարդաձորում: Ընդամենը երկու տարի աշխատելով որպես Հայաստանի Պատմական թանգարանի ճարտարապետական բաժնի վարիչ, նա կազմակերպել է այդ բաժինը և կազմել հայկական ճարտարապետության շատ հուշարձանների նկարագրերը:

Դրան զուգընթաց Թորամանյանը մինչև կյանքի վերջը սիստեմատիկաբար աշխատում էր ամփոփել իր 30-ամյա գիտական ուսումնասիրությունները «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» մեծածավալ աշխատության մեջ, որի համար նա գրեց մի շարք ընդհանրացնող գլուխներ:

Սովետական տարիներին են վերաբերում նաև Թորամանյանի «Շինանյութերն ու նրանց գործածության կերպը հին Հայաստանում», «Գեղարդաձորում կատարած պեղումների տեղեկագիրը», «Խորհրդային իշխանությունը և մեր պատմական հուշարձանները», «Ակնարկ հայ հին ճարտարապետության վրա» և մի շարք այլ աշխատություններ: Վատառողջությունն ու վերահաս մահը, որը տեղի ունեցավ 1934 թ. մարտի 1-ին, հնարավորություն չտվին նրան՝ իրականացնել իր փայփայած գաղափարները՝ ավարտելու ծրագրած «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» մեծածավալ աշխատությունը:

Մահվանից մեկ ամիս առաջ, 1934 թ. փետրվարին, նշվեց նրա գիտական գործունեության 30-ամյակը և այդ առթիվ Թորամանյանն արժանացավ գիտության վաստակավոր գործչի պատվավոր կոչմանը:

Թեև սովետական տարիներին Թորամանյանը համարյա չզբաղվեց ճարտարապետի պրակտիկ գործունեությամբ, սակայն իր բազմահարուստ գիտական հետազոտություններով օբյեկտիվորեն նպաստեց սովետահայ ձևով ազգային և բովանդակությամբ սոցիալիստական ճարտարապետության սկզբնավորմանն ու զարգացմանը: Նրա սերտ կապերը Ալեքսանդր Թամանյանի հետ բարերար նշանակություն ունեցան վերջինիս մեծատաղանդ ստեղծագործությունների համար: Թորամանյանը հանդիսանում էր Թամանյանի մշտական խորհրդատուն հայ ճարտարապետության ձևերի հարցերում: Թամանյանը չափազանց բարձր էր գնահատում Թորամանյանին որպես հայ ճարտարապետության միակ գիտակի, որպես մեծ գիտնականի: Թորամանյանի և Թամանյանի, հայ ճարտարապետության այդ երկու հզոր սյուների, ստեղծագործական բարեկամության մեջ փայլուն կերպով նշանավորված է տեսության և սյրակտիկայի այն սերտ կապը, որն առաջ է տանում ինչպես ճարտարապետական գիտությունը, այնպես էլ ճարտարապետական ստեղծագործությունը:

Ի սրտե ողբալով Թորամանյանի անդարձ կորուստը, նրա հիշատակին նվիրված ջերմ տողերում Ալեքսանդր Թամանյանն ու Մարտիրոս Սարյանը գրել են. «... Այժմ, երբ մեզ ժպտում են այն փայլուն հեռանկարները, որ ունենալու է մեր ձևով ազգային ու բովանդակությամբ սոցիալիստական կուլտուրան, որի համար իբրև հիմնական ազդակներից մեկը նշվում է հին կուլտուրայի և արվեստի խորացած ուսումնասիրությունը, քննադատաբար յուրացումն ու օգտագործումը,— այս պայմաններում, ահա, Թորամանյանի թողած ժառանգության արժեքն ավելի ուշագրավ է դառնում»¹:

Թորամանյանի գիտական ժառանգությունը հետզհետե դառնում է մեր ժողովրդի սեփականությունը: Նրա մահվանից հետո, 1942 թ. լույս տեսավ «Նյութեր հայ ճարտարապետության պատմության» գրքի առաջին, իսկ 1948 թ. նաև երկրորդ հատորը, որտեղ ի մի են հավաքված հայ ճարտարապետության անխոնջ հետազոտողի նախասովետական և սովետական շրջանում բազմաթիվ պարբերականներում լույս տեսած հոդվածները, առանձին դրքերը և անտիպ աշխատությունները: Երկհատոր այդ սովար ժողովածուի հրատարակումը հանդիսացավ Թորամանյանի պայծառ հիշատակի լավագույն հավերժացումը, միևնույն ժամանակ խոշոր շափով նպաստեց հայ ճարտարապետության պատմության հետագա ուսումնասիրության գործին:

Վերջին տարիների ընթացքում լույս են տեսել բազմաթիվ նոր աշխատություններ՝ նվիրված հայ ճարտարապետության պատմությանը, որոնք հիմնականում խարսխվելով Թորամանյանի գիտական ժառանգության վրա, շարունակում են այն կարևոր գործը, որին այնպես ազնիվ կերպով ծառայեց իր ամբողջ կյանքում ճարտարապետ Թորոս Թորամանյանը:

Թորամանյանի պայծառ հիշատակը, որպես հայ ժողովրդի առաջավոր և բազմավաստակ զավակներից մեկի, միշտ վառ կմնա մեր ժողովրդի սրտում: Հայրենի երկրի արվեստի ու ճարտարապետության ուսումնասիրության գործում նրա բացած «արահետը»,— ինչպես համեստորեն որակում էր ինքը,— դառնում է լայն ճանապարհ, որովհետև միայն սովետական ժողովուրդն է, որ ըստ արժանվույն գնահատում է ու պահպանում իր նախնիների ստեղծած կուլտուրական ժառանգությունը և այն քննադատաբար օգտագործում իր նոր, սոցիալիստական կուլտուրայի կերտման համար:

¹ «Գրական թերթ», 1934 թ., մարտ: